

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՌՈՒԲԵՆՍ ԲԱՂԴԱՍԱՌՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՐԸ

Հայտնի հասարակական-քաղաքական և մշակութային գործիչ, արձակագիր և թարգմանիչ Կարեն Միքայելյանը (1883-1941) 20-րդ դարի քսանական-երեսունական թվականներին մեծ վաստակ ունի նաև սփյուռքահայությանը մայր Հայրենիքին կապելու գործում:

1921 թ. ստեղծված Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) շրջանակներում նա այցելում է Եվրոպայի և Ամերիկայի ամենաազդեցիկ հայկական գաղութները: ՀՕԿ-ի և Կարմիր խաչի պատվիրակության կազմում նա գործուղվում է Միացյալ Նահանգներ և Արևմտյան Եվրոպա, ուր իր գործընկերների հետ (Գ. Վարդանյան, Ս. Կաճարական) ներկայացնում է խորհրդային Հայաստանի նվաճումները՝ նպատակ ունենալով սփյուռքից նյութական օգնություն ստանալ նորաստեղծ սոցիալիստական հանրապետության համար:

1925 թ. նոյեմբերի 5-ին Կ. Միքայելյանը Մոսկվայից արտասահման է մեկնում գործընկերների հետ: Հայկական պատվիրակությունը մինչև 1926 թ. դեկտեմբեր այցելում է Արևմտյան Եվրոպա, Ամերիկա: Իր հաշվետվության մեջ, որը Միքայելյանը ներկայացրել էր վերադասին երկարատև գործուղման ավարտից հետո, նա գրում է. «Պատվիրակությունը անցնելով Ռուսաստանից եղավ Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա, Անգլիա, Ամերիկա մինչև Կալիֆորնիա և 58 վայրում 121 անգամ հրապարակական բանախոսություն ունեցան կամ կինոյի ցուցադրությամբ կամ առանց, որին ներկա են գտնվել 46 650 մարդ: Այդ վայրերը հետևյալներն են՝ Բեռլին, Փարիզ, Մարսել, Վալանս, Լիոն, Արֆորվիլ, Բյուսսել, Անտվերպեն, Լոնդոն, Նյու-Յորք, Ֆիլադելֆիա, Պրովիդենս, Բոստոն, Կլիվլենդ, Դետրոյտ, Պոնտիակ, Չիկագո, Ֆրեզնո, Սան-Ֆրանցիսկո, Վաշինգտոն, Ռիչմոնդ, Մոսկվա և այլն: Այս բոլոր քաղաքները պատելու համար 13 ամսվա ընթացքում պատվիրակությունը կտրել է 53281 կմ տարածություն թե երկաթուղով և թե նավով»¹:

Այնուհետև, խոսելով «բարոյական արդյունքների» մասին, Միքայելյանը գեկույցում նշում է, որ պատվիրակությունը իր շրջագայության ընթացքում բոլոր գաղութներում անխտիր գրկաբաց ընդունելություն է գտել և խանդավառ ցույցերի առարկա դարձել: Արտասահմանի ամբողջ հայ մամուլը զբաղվել է նրանով, հրապարակական բոլոր ժողովներին պատվիրակությունը բանախոսել է

խորհրդային Հայաստանի արդի կացության և նրա մեջ կատարվող շինարարական աշխատանքների մասին և ցուցադրել «խորհրդային Հայաստան» ֆիլմը²: Իր մանրամասն հաշվետվության մեջ Կ. Միքայելյանը զեկուցում է ղեկավարությանը, որ երկրներում և քաղաքներում քանի ՅՕԿ-ի և Կարմիր խաչի կազմակերպություն գոյություն ունի, մանրամասն տեղեկացնում է պատվիրակության ծախսերի մասին այս կամ այն երկրում և այլն:

Մի այլ զեկուցում ուղղված ՅՕԿ-ի գլխավոր վարչությանը 1925 թ. դեկտեմբերի 26-ին Փարիզից, Միքայելյանը նշում է Շիրվանզադեի նախագահությամբ Փարիզում (ՅՕԿ-ի տեղական վարչության կողմից) Հայաստանից գնացած պատվիրակներին տրված ճաշկերույթի մասին, շոշափում է բարեգործական նպատակներով կատարված նվիրատվությունների, գաղութներում ապրող հայ գաղթականության իրավական և տնտեսական վիճակի, նրանց ցանկությունների ու պահանջների, դեպի խորհրդային Հայաստանը ունեցած ջերմ վերաբերմունքի, արտասահմանից հայրենիք վերադառնալ ցանկացողներին ընդառաջելու, կտակների հետ կապված հարցերի մասին³:

Ոչ միայն պաշտոնական նյութերը, այլև Միքայելյանի մասնավոր նամակագրությունը փաստում են նրա եռանդուն գործունեությունը սփյուռքահայության մեջ: Այսպես, օրինակ, 1926 թ. հունվարի 31-ին նա գրում է Փարիզից Վահան Մալեգյանին. «...Լի հույսերով, որ Բրյուսելի հայ գաղութը մեզ ցույց տված անկեղծ ընդունելությունից հետո պիտի կարողանա և հայրենիքի շինարարական աշխատանքներին լծակից լինել՝ ես հեռացա Բելգիայից ամենալավ տպավորության ներքո...»⁴:

Կ. Միքայելյանի շրջագայությունը ԱՄՆ-ում ՅՕԿ-ի պատվիրակության կազմում մեծ արծազանց գտավ սփյուռքահայության մեջ, լայնորեն լուսաբանվեց տեղական մամուլում: Բնական է, որ տարբեր կուսակցություններ և նրանց լրատվական միջոցներ համապատասխան մոտեցում էին ցուցաբերում խորհրդային երկրի պատվիրակության այս առաքելությանը:

Հայաշատ Կալիֆորնիան մեծ հետաքրքրությամբ էր լցված խորհրդային Հայաստանից եկած գործիչների նկատմամբ: Ֆրեզնոյի «Մշակ» թերթը իր 1926 թ. հուլիսի 27-ի համարում⁵ տեղեկացնում է պատվիրակության ժամանման մասին, տեղադրում լուսանկարներ և կենսագրական տվյալներ պատվիրակության անդամների՝ Գ. Վարդանյանի, Ս. Կամսարականի և Կ. Միքայելյանի մասին: Նյութը վերնագրված է «Խ. Հայաստանի, ՅՕԿ-ի և պետական հայ Կարմիր խաչի ներկայացուցիչները»: Մասնավորապես, Կ. Միքայելյանին ներկայացնելիս, թերթը գրում է. «Քաղաքացի Կարեն Միքայելյան ծնված է Գողթան գավառի Վերին Ագուլիս գյուղին մեջ: Իր ծնողը ունեւոր դասակարգի կապտկանեին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցը, միջնակարգը՝ Թիֆլիսի Ներսիսյան վարժարանը,

իսկ բարձրագույնը՝ Գերմանիա՝ Եմայի համալսարանը: Կ. Միքայելյանը կապտականի նախապատերազմական շրջանի ռուսահայ գրագետների այն շարքին, որ տված են նորավեպեր: Հրատարակել է պատմվածքներու երկու ժողովածու՝ «Չրկանքի հույզեր» և «Չմռան երեկո» անուններով: Այնուհետև ունի բավական թվով պատմվածքներ, որոնք լույս տեսեր են զանազան պարբերականներու մեջ: Ունի շարք մը թարգմանություններ, որոնց թվին Օսկար Ուայլդի հեքիաթները... 1909-1912-ին Սյամնիկյանի, Ռուբենի, Վ. Տերյանի, Ց. Խանգադյանի և Պ. Մակինցյանի հետ Սոսկվայում խմբագրեր և հրատարակել է «Գարուն» ավանախմբերը: 1915-ին մասնակցեր է հայտնի ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովի խմբագրությանը լույս տեսած ռուսերեն լեզվով «Հայաստանի բանաստեղծությունը» մեծահատոր գրքի խմբագրական աշխատանքներին: 1916-ին ճանապարհորդեր է Հայաստան, այցելել տասը հազար ուրբերու և անոնց բերանեն զրի առած է հայ ժողովրդի ողբերգությունը: Գեղարվեստական մշակման ենթարկելով այդ պատմվածքները, հրատարակած է «Հռչակված Հայաստանը» խորագրին ներքո: Ռուսական հեղափոխությունեն հետո, Լազարյան ճեմարանի (Մոսկվա) դպրոցական խորհրդի նախագահն էր 1918-1919 թվականներին, իսկ 1920-ին նույն ճեմարանի տեսուչն էր, որ արդեն գոյություն ուներ իբրև «Խ. Հայաստանի կուլտուրայի տուն» անվան տակ: Այդ ժամանակները եղեր է Մոսկվայի ՀՕԿ-ի հիմնադիրներեն մեկը, անոր նախագահը և իբրև այդպիսին՝ Երևանի համագումարի կողմեն ընտրված է ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության անդամ: Նախքան արտասահման մեկնելը՝ իբրև պատվիրակության անդամ մոտ տարի մը եղեր է Հայաստան, ճանապարհորդեր է ամեն անկյուն և ուսումնասիրեր երկրի այժմյան վիճակը:

«Մշակի» նույն համարում զետեղված է տեղեկագրություն՝ «ՀՕԿ-ի և պետական հայ Կարմիր խաչի հրապարակային ժողովները Ֆրեզնոի մեջ», ուր մասնավորապես, հայտնվում է, որ հուլիսի 23-ին տեղի է ունեցել մեծ հանդիսավոր ժողով, որի նախագահությունում էին պրոֆեսոր Լևոն Արծրունին, ՀՕԿ-ի Ֆրեզնոյի մասնաճյուղի ղեկավար Գարեգին Մանուկյանը, եկեղեցականներ: Կ. Միքայելյանի ելույթի մասին թերթը գրում է. «...քեմ եկավ ծափերու խլացուցիչ տարափին մեջ պ. Կարեն Միքայելյանը: Պարոն առենախոսը մեկ ժամ խորհրդային Հայաստանի մեջ կատարված անցքերու շուրջ խոսելով, պարզաբանեց և հատուկ կերպով վերլուծեց թե Արարատի ստորոտը փռքիկ այլ անկախ Հայաստան մը ունինք, որ ազատ է ու անկախ, և ուր հայերենը պաշտոնական և պարտավորիչ լեզու է Հայաստանի դատարաններում, դպրոցներում և որևէ պաշտոնատեղիի մեջ: Ծնորիվ հայ վարիչներու թափած ջանքերուն, Հայաստան խաղաղ շրջան մը կը բոլորե հայ ժողովուրդը վերաշինության հսկա աշխատանքներուն լծված, նոր դրախտավայր մը կը կերտե այն ավերակներուն վրա, որոնք մեր սիրելիներու արյունով նվիրագործված և սրբացած են: Հաճույք է լսել պարոն Միքայելյանը:

Ամ ուներ մաքուր և գրական լեզու մը և սահուն արտահայտություն: Պատկերալից բացատրություններով համեմված ատենախոսությունը խանդավառ ծափահարություններով կընդհատվեին. սրտի գոհունակության ընծայելով և հայրենիքի անուշ հիշատակները արթնացնելով ունկնդիրներու սրտին մեջ»:

Թերթը նույն համարում հայտնում է նաև, որ հուլիսի 24-ին տեղի է ունեցել մեծ ընդունելություն Հայաստանից ժամանած պատվիրակության պատվին:

Պարբերականը տեղեկացնում է, որ հենց այս ճաշկերույթին դոկտոր Ս. Թիֆեջյանի առաջարկությամբ որոշվում է հավաքել 10 հազար դոլար Հայաստանում Ազգային տուն կառուցելու համար, որ հուլիսի 25-ին Ֆրեզնոյում անց է կացվել հայկական ֆիլմերի ցուցադրություն, որին մասնակցել է 3000 մարդ:

Քաղաքական-հասարակական և գրական «Ասպարեզ» թերթը, Ամերիկայի Դաշնակցության ԿԿ օրգանը, խիստ քննադատաբար է ընդունում «Մոսկվայի գործակալներին»: 1926 թ. հուլիսի 30-ի համարում «ՀՕԿ-ի պատվիրակության անպատասխանատու հայտարարությունը» խմբագրական հոդվածում⁶ թերթը, մասնավորապես, անդրադառնում է Կարեն Միքայելյանի ընդարձակ ելույթին այդ հանդիպումներից մեկում և կոշտ գնահատական է տալիս նաև խորհրդային պատվիրակության առաքելությանը ԱՄՆ-ում: Պետք է խոստովանել, որ թերթը շատ չէր շեղվել իրականությունից և, ցավոք, ներկայացրել էր դառն ճշմարտությունը... Հազիվ թե, սակայն, Միքայելյանը և իր գործընկերները, կրթված մտավորականներ լինելով, չգիտեին այդ բոլորը առանց ամերիկահայ թերթի «հիշեցնանք»... Քաղաքական իրողությունը այն էր, որ ՀՕԿ-ի և ԽՍՀՄ Կարմիր խաչի պատվիրակության Մոսկվայի հովանու տակ կազմակերպված գործուղման «գերխընդիրը» և իմաստը այն էր, որ առավելագույնս օգտագործվի սփյուռքի նյութական ներուժը և բարոյական դրական մթնոլորտը՝ ի շահ խորհրդային Հայաստանի շինարարությանը: Ազգային «կնճռտ» հարցերը և ծանր «պատմական բեռը», բնականաբար, մի կողմ էին դրվել բռնապետական երկրի պայմաններում. ի՞նչ խոսք կարող էր գնալ «ազատ և անկախ» Հայաստանի մասին... Խելամիտ մարդիկ դա հասկանում էին: Եվ այս ամենը պետք չէր հիշեցնել Միքայելյանին՝ մի մարդու, որը գերազանց գիտեր հայ ժողովրդի XX դարի սկզբի ողբերգության պատմությունը, եղեռնի հետևանքները, որը անձամբ 1916-1917 թթ. շրջել էր ողջ Անդրկովկասով և հանդիպել որբանոցներում հայ մանուկների հետ, գրի առել և հրատարակել նրանց սարսափելի վկայությունները («Հոշոտված Հայաստան»):

Շրջագայությունը սփյուռքահայ գաղութներում թույլ տվեց Կարեն Միքայելյանին կազմել և հրատարակել մի շատ կարևոր գիրք ևս՝ «Հայ ժողովրդական հարստություններն արտասահմանում. Կտակներ, նվիրատվություններ և հասարակական գումարներ», որը հայերենով լույս տեսավ 1928 թ.⁷ Մոսկվայում⁸: Հրատարակության մեջ ընդգրկված հարուստ նյութը (Սանասարյանի, Գյուլ-

քեցնկյանի և մյուս հայ մեծահարուստների, հասարակական և քաղաքական գործիչների կտակները, ֆոնդերը և այլք) պատկերացում էր տալիս արտասահմանում կուտակված զգալի «հայ կապիտալի» մասին, որը թեկուզ մասամբ կարող էր դրվել հոգառու խորհրդային Չայաստանի:

Սփյուռքում Կ. Միքայելյանին հետաքրքրում է այն ամենը, ինչ կարող էր օգտակար լինել Չայաստանին: Նրա գործունեության մեջ արտասահմանում, ինչպես նշեցինք, մեծ տեղ են գրավում հայ մեծահարուստների և հայտնի հասարակական-քաղաքական գործիչների կտակները, ֆոնդերը, գումարները: Գրողի արխիվում պահպանվում են բազմաթիվ նյութեր (տեղեկություններ, տեղեկանքներ, պաշտոնական փաստաթղթեր, նամակներ, գրություններ, բացիկներ), կապված Ավետ Սարգսյանի, Ջոն Արշակունու, Ջատիկ Խանզադյանի, Գալուստ Գուլբենկյանի և այլոց հետ, որոնք մեծ գումարներ են տրամադրել Չայաստանում տարբեր կարևոր օբյեկտների շինարարությանը, որբերի և գաղթականներին ապրուստի ապահովմանը և այլն¹:

Բավականին ջերմ և սերտ կապերը սփյուռքահայության հետ տալիս էին իրենց պտուղները. ամրապնդվում էին Չայաստանի հարաբերությունները տարբեր միջազգային ազդեցիկ կազմակերպությունների, բանկերի, միությունների, հայրենակցությունների և ուղղակի հայտնի մարդկանց հետ, որոնք հեղինակություն էին վայելում այս կամ այն գաղթօջախում: Եվ կարելի է ասել, որ Կարեն Միքայելյանի եռանդը և ակտիվ միջամտությունը տարբեր գործընթացներին տալիս էին, շատ դեպքերում, փայլուն արդյունք՝ բոլորը «ներքաշվում» էին հայաբնակապետ գործունեության մեջ՝ ի շահ Չայաստանի... խորհրդային մտավորականի վառ կերպարը, անձնական մարդկային հատկությունները, բարձր ինտելեկտը ձգողական ուժ ունեին:

ԾԱՆՈԹՍԳԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ե. Չարենցի անվան. գրականության և աիվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Կ. Միքայելյանի ֆ., N 819:

2. «Խորհրդային Չայաստան» ֆիլմը բաղկացած էր 6 մասից, 1800 մ ժապավով (ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., N 4631):

3. ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆ., N 794:

4. Նույն տեղում, Կ. Մալեզյանի ֆ., N 378:

5. ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆ., N 1043 («Մշակ» թերթը):

6. Նույն տեղում, N 1033 («Սևպարեզ» թերթը):

7. Նույն տեղում, N 1021 («Հայ ժողովրդական հարստություններն արտասահմանում» գիրքը):

8. Նույն տեղում, NN 917-934 և այլն: